

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՆԱԲՅԱՆ 5 ՀԱՍՅԵՈՒՄ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Պայմանագիր № ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-26/2-1

Չափաբաժին -3



Գիրք 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ ԵՎ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Երևան 2026



ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

HEA
ENGINEERING & DESIGN

Պայմանագիր № ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-26/2-1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Չափաբաժին -3

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԱԲՅԱՆ 5
ՀԱՍՑԵՈՒՄ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գիրք 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ ԵՎ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Տնօրեն

Է. Հոդաբաշյան

Նախագծի գլխավոր ինժեներ

Է. Հոդաբաշյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԱԲՅԱՆ 5
ՀԱՍՑԵՈՒՄ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

- Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ
Գծագրական մաս և ծավալաթերթ
- Գիրք 2 - Նախահաշիվ

ԳԻՐՔ – 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

- Լիցենզիաներ և լիցենզիայի ներդիրներ
- Տեխնիկական առաջադրանք
- Վեոլիա Ջուր ՓԲԸ կողմից տրված միացման տեխնիկական պայման
- Ինժեներա-երկրաբանական պայմանների հաշվետվություն
- Երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջներ
- Էլեկտրոնային հարթակով շահագրգիռ կազմակերպությունների կողմից ստացված համաձայնություններ:
- Աշխատանքային ծավալներ

Բացատրական մաս

Ընդհանուր բացատրագիր և շինարարության կազմակերպում:

Աշխատանքային ծավալներ

Գծագրական մաս

- Թերթ ՋՋ-1* Դիտարկվող տարածքի տեղադիրքային հատակագիծ Մ 1:5000, ընդհանուր տվյալներ:
- Թերթ ՋՋ-2* Գոյություն ունեցող և նախագծվող կոյուղատար համակարգերի գլխավոր հատակագիծ Մ 1:1000:
- Թերթ ՋՋ-3* Նախագծվող կոյուղու կոլեկտոր Կ1-ի երկայնական կտրվածքներ ՆԿ 0+00 – ՆԿ 2+80:
- Թերթ ՋՋ-4* Նախագծվող կոյուղու կոլեկտոր Կ1-ի երկայնական կտրվածքներ ՆԿ 2+80 – ՆԿ 4+70, մասնագիր և ելքագծերի խրամուղու լայնական կտրվածք:
- Թերթ ՋՋ-5* Նախագծվող կոյուղու կոլեկտոր Կ1-ի լայնական կտրվածքներ և միացման հանգույցի հատակագիծ:
- Թերթ ՋՋ-6* Մասնագրեր և դիտահորերում միացման հանգույցների տիպային հատակագծեր:
- Թերթ ՋՋ-7* Նախագծվող կոյուղու կոլեկտոր Կ2-ի երկայնական և լայնական կտրվածքներ, մասնագրեր:
- Թերթ ՋՋ-8* Ջրահեռացման Ե/Բ դիտահոր D=1.0 մ:
- Թերթ ՋՋ-9* Ջրահեռացման Ե/Բ դիտահոր D=1.5 մ:
- Թերթ ՋՋ-10* Շինարարության կազմակերպման գլխավոր հատակագիծ Մ 1:1000:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 26-2

ՀՀ դրամ

2/ Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	2/Մ	ընդհանուր գինը	կատարման ժամկետը
		Աջափնյակ վարչական շրջանում կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ			
1	71241200/921	Շինարարների փողոց հ.4 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/կոյուղագիծ/– 100 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
2	71241200/915	Քրրք Քրրքոյան փողոցի հ.38 հասցեի (մանկապարտեզ) հարակից տարածք /ներառյալ՝ մուտքագծեր/կոյուղագիծ/– 220 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
3	71241200/923	Հալաբյան փողոց հ.5 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/կոյուղագիծ/– 180 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
4	71241200/922	Արզումանյան փողոց հհ.13, 15, 17 հասցեներ /ներառյալ՝ մուտքագծեր/կոյուղագիծ/– 300 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
5	71241200/924	Մարգարյան փողոց 1-ին նրբանցք հ.5 հասցեից մինչև Մարգարյան փողոց 2-րդ նրբանցք հ.2 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/– 300 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
		Արաբկիր վարչական շրջանում կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ			
10	71241200/920	Գյուլբենկյան փողոց հհ.39 և 39Ա հասցեներ /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/– 230 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
16	71241200/909	Հակոբյան փողոց հ.7 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/կոյուղագիծ/– 170 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
17	71241200/903	Կոմիտասի պողոտա հ.48Ա հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/կոյուղագիծ/– 220 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր

		Դավթաշեն վարչական շրջանում կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ			
18	71241200/897	Դավթաշեն 1-ին թաղամաս հ.30 հասցեից մինչև Տ. Պետրոսյան փողոց /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/– 500 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
19	71241200/884	Դավթաշեն 4-րդ թաղամաս հ.17 հասցեից մինչև 32 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/– 400 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
20	71241200/889	Դավթաշեն 4-րդ թաղամաս հ.5 հասցեից մինչև հ.62 մանկապարտեզ /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/– 300 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր
		Կենտրոն վարչական շրջանում կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ		1	
21	71241200/902	Տերյան փողոց հ.54 հասցե (հ.19 դպրոց) /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/– 180 գծմ /մոտավոր/	դրամ	1	Պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60-րդ օրացուցային օր

Տեխնիկական առաջադրանք յուրաքանչյուր չափաբաժնի համար

- Ուսումնասիրել տվյալ չափաբաժնում նշված հասցեներից մինչև վերջնական միացման կետի զարգացման հեռանկարը, այնուհետև միայն կազմել և ներկայացնել նախագիծը,
- Համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտել աբոնենտների քանակը և կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի/ անհրաժեշտ հզորությունը,
- Միացման կետերի տեխնիկական պայմանները «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ց ստանալու է Պատվիրատուն:
Այսինքն, պայմանագիր կնքելուց հետո պայմանագրի կողմը համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտում է աբոնենտների քանակը և կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի/ անհրաժեշտ հզորությունը և Պատվիրատուին է ներկայացնում համապատասխան տեղեկանք, որտեղ զետեղված կլինի բոլոր այն անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչը անհրաժեշտ է Պատվիրատուին «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ին դիմելու և համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:
- Նախատեսել կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի / կառուցումը,
- Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալները,
- Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն,
- Նախագիծը ներկայացնել 7 օրինակից և էլեկտրոնային կրիչով,
- Նախագծա–նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության հետ;
- Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները;
- Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները;
- Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են նաև ռուսերեն լեզվով;
- Աշխատանքների վճարումը կիրականացվի դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո:
- Ընկերությունը պետք է ունենա ՀՀ տարածքում քաղաքաշինական փաստաթղթերի կազմման՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասի 1-ին կամ 2-րդ դասի լիցենզիայի ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմեխորագիա) ենթատեսակի ներդիր:

« 12 » 02

տնտեսության վարչության պետ՝ Արմեն Կարոյանին
2026թ.

N 24873409

ք. Երևան, Արգիշտի 1

Հարգելի պարոն Կարոյան,

Ի պատասխան Ձեր 03.02.2026թ.-ի 45/12210-26 դիմումի, Երևանի քաղաքապետարանի ծրագրերով ջրագծի և կոյուղագծերի կառուցման ու գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի աշխատանքների իրականացնելու համար Ձեզ ենք տրամադրում ներքոնշյալ հասցեների ելակետային տվյալները.

1. Շինարարների փողոց հ.4 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 100 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 1000մմ կոյուղատարին
2. Քրք Քրքոբյան փողոցի հ.38 հասցեի (մանկապարտեզ) հարակից տարածք /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 220 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Լենինգրադյան փողոցով անցնող 700մմ կոյուղատարին
3. Հալաբյան փողոց հ.5 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 180 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 700մմ կոյուղատարին
4. Արզումանյան փողոց հ.13, 15, 17 հասցեներ /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 300 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Լենինգրադյան փողոցով անցնող 700մմ կոյուղատարին
5. Մարգարյան փողոց 1-ին նրբանցք հ.5 հասցեից մինչև Մարգարյան փողոց 2-րդ նրբանցք հ.2 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 300 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 300մմ կոյուղատարին
6. Մարգարյան փողոց հ.13 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 120 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 250մմ կոյուղատարին
7. Դավթաշեն 1-ին թաղամաս հ.30 հասցեից մինչև Տ. Պետրոսյան փողոց /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 500 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 700մմ կոյուղատարին

8. Դավթաշեն 4-րդ թաղամաս հ.17 հասցեից մինչև 32 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 400 զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 300մմ կոյուղատարին
9. Դավթաշեն 4-րդ թաղամաս հ.5 հասցեից մինչև հ.62 մանկապարտեզ /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 300 զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 300մմ կոյուղատարին
10. Սեբաստիա փողոց հ.22 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 120 զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 400մմ կոյուղատարին
11. Զ. Անդրանիկի փողոց հ.66 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 80 զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող 250մմ կոյուղատարին
12. Աճեմյան փողոց հ.135 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /ջրագիծ/-450զժմ /մոտավոր/- ջրագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող ջրագծին
13. Տերյան փողոց հ.54 հասցե (հ.19 դպրոց) /ներառյալ՝ մուտքագծեր/ / կոյուղագիծ/- 180զժմ /մոտավոր/- կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող կոյուղատարին
14. Մառի փողոց նրբանցք հհ.1,4 և 4/3 հասցեներ /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/-180զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող կոյուղատարին
15. Մուլդովական փողոց հ.48/3 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/-270զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող կոյուղատարին
16. Մուլդովական փողոց հհ.43 և 43/1 հասցեներ /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 150 զժմ /մոտավոր/- կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող կոյուղատարին
17. Օրբելի փողոց 8 և 10 հասցեներ /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/-100զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող d=250մմ կոյուղատարին
18. Հ. Հակոբյան փողոց 7 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/-170զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող d=300մմ կոյուղատարին
19. Կոմիտասի պողոտա 48Ա հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/-220զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող d=300մմ կոյուղատարին
20. Բաղրամյան պողոտա 58 հասցե /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/-60զժմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող d=800մմ կոյուղատարին

21. Մուշական թաղամաս (չկոյուղացված՝ ձախակողմյան հատված) /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 2700 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող Աերացիա մաքրման կայանից
22. Ջրաշեն թաղամաս /ներառյալ՝ մուտքագծեր/ /կոյուղագիծ/- 3500 գծմ /մոտավոր/ - կոյուղագծի միացման կետ կտրամադրվի Ընկերության կողմից սպասարկվող Աերացիա մաքրման կայանից
23. Վ.Անանյան փողոց /ներառյալ՝ մուտքագծեր/կոյուղագիծ/-400գծմ /մոտավոր/ միացում հնարավոր է իրականացնել Ընկերության կողմից սպասարկվող 1000մմ կոյուղատարին:
- Առդիր՝ 24 էջ:

Հարգանքով՝



Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Պատասխանատու՝
«Երևան» ՇՏ տնօրեն
Մ. Գալստյան
Հեռ.՝ 010300190/666/



Image © 2026 Airbus

70000

62706 S. 70000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000280, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐԿԱԾ Է

2024-08-21, «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ, ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Փ. 1 ՆՐԲ., 24

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)



ՀՄԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG3D-F1C8-C4A4-85B2

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային բնօրինակի ներքեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000280-08

(ներդիրի սերիան, համարը)

«ԷՅԶ-Ի-ԷՅ» ՍՊԸ

(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ (ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ, ՀԻԴՐՈՍԵԼՈՐԱՑԻԱ)

(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)

21.08.2024թ.

(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

Գործողության ժամկետը՝

21.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում



ՀՍԿԻԶ ՀԱՄԱՐ՝ UG5E-1232-F955-DD91

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներքեռնումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

Տարածք՝ ՀՀ ԵՐԵՎԱՆՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԱԲՅԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ՈՒՂԵԳԾԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ճարտարագիտաերկրաբանական հետազննություններ.

1. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:

2. Տեղադիտական հետազննություններով վերհանել վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները, եթե դրանք առկա են (սողանք, քարաթափում, ճահճացում և այլ):

3. Գոյություն ունեցող փոստրակների խրամուղիների և տեղանքում արխիվային նյութերի միջոցով պարզաբանել գրունտների շերտերը և դրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը:

4. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը՝ կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:

5. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ, դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ամփոփում:

6. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Տեղանքը՝ ըստ ՀՀՇՆ-1-2,01-99-ի ինժեներաերկրաբանական պայմանների, I-ին կարգի տեղամաս է:

Ուսումնասիրվող տարածքի տեղագնունը կատարվել է 2025 թվականի հունիս ամսին:

Ուսումնասիրվել են գոյություն ունեցող փոստրակները, խրամուղիները, հարակից տարածքների բնական կտրվածքները, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Տեղանքի մանրամասն ուսումնասիրության և գոյություն ունեցող բնական բացվածքների, տեղանքում առկա կտրվածքների հիման վրա տվյալ տարածքում գրունտները պարզ են դարձել:

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրական տեսակետից տարածքները տեղադրված են ՀՀ քաղաք Երևան, Աջափնյակ վարչական շրջանում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 1010.0-1030.0 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական հասակի շերտերը:



Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2023 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքները գտնվում են Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 25°C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 60% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-3,7^{\circ}\text{C}$ է, թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ «Երևան» կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան	900	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.79	-28	42

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Չյան ծածկույթը			
	Ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան	<u>24</u> 24	<u>23</u> 23	<u>32</u> 34	<u>35</u> 29	<u>45</u> 42	<u>23</u> 34	<u>11</u> 29	<u>8</u> 37	<u>12</u> 51	<u>29</u> 35	<u>28</u> 36	<u>21</u> 28	<u>291</u> 51	58	47	-


Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2023

նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 21մ/վ է, 50 տարվա ընթացքում 22մ/վ:

Չյան նորմատիվային կշիռը՝ 70կգ/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ² է:



Նկ 2. Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Հիդրոերկրաբանական

տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են 20 մետրից խորը հորիզոնների վրա:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04-2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ:

2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ առկա բնական կտրվածքների, փոստրակների, նախկինում հորատման և արխիվային նյութերի տվյալների (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա), ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ 3 ինժեներաերկրաբանական (ԻԵՏ) տարրերը կամ շերտերը վերնից–ներքև.

**ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 5 հասցեում
վերակառուցվող կոյուղագծերի ուղեգծերի գրունտները տրվում են երեք շերտով:**

Շերտ1 0.0-0.2 մ Խճավազներ, խիճ, կավավազային լցիչով,
(ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):
Ծավալային կշիռը՝ 1.9տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 300կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 12.IV կարգ է:

Շերտ2 0.2-2.0 մ Ճալաքարակոպճավազային բնահողեր 30% զլաքարի պարունակությամբ
բազալտի խիճ, խճավազներ, տեղ-տեղ բեկորներ կավավազային,
ավազակավային լցիչով, խառնաքար և փշրաքար կրաքարային
ցեմենտով միջին ամրության:
Ծավալային կշիռը՝ 2,0-2.3 տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 400-600կՊա:
Գրունտները ըստ շահագործման դժվարության՝ համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի՝
20% - 5.4 IV կարգ:
40% - 5.5 V կարգ:
40% - 16.3 VI կարգ:

Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ց Ա Ն Կ

1. ГОСТ 25100-2020. Грунты. Классификация.
2. ՀՀՇՆ IV 10.01.01-2006 “ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱՏԱԿԵՐ”
3. ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ-101 «Բնահողերի և ապարների
դասակարգում»
4. ՀՀՇՆ 20-04.2020թ.-Երկրաշարժադիմացկուն շինարարություն
5. ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության
համար: «Հիմնական դրույթներ»
6. ՀՀՇՆ 22-01-2023 «Շինարարական կլիմայաբանություն»Геология АрмССР
том 1 Геоморфология 1961г.

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ_ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՅԱՏՐԱԳԻՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Երևանի քաղաքապետարանի պատվերով «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊ ընկերության կողմից № ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-26/2-1 պայմանագրի շրջանակներում չափաբաժին 3-ով մշակվել է «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 5 հասցեում կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ» աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ):

ԱՆ-ի մշակման համար հիմք են հանդիսացել Պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական և ճարտարապետահատակագծային առաջադրանքները, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված միացման տեխնիկական պայմանները, տեղում մեր մասնագետների կողմից իրականացված ուսումնասիրությունները և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ համապատասխան ստորաբաժանման ինչպես նաև շահագործող և այլ շահագրգիռ կողմերի հետ կայացած քննարկումները և դրանց արդյունքում կայացված որոշումները:

ԱՆ-ի շրջանակներում մշակվել է Հալաբյան 5 հասցեում կոյուղատար համակարգի վերակառուցման աշխատանքային գծագրերը (տես գծագրական մաս Բաժին-ՋՋ), ինչպես նաև համապատասխան աշխատանքային ծավալները:

Վերոնշյալ աշխատանքների նպատակը դիտարկվող հասցեում կոյուղագծերի վերակառուցումն է ապահովելով բնակելի շենքերից առաջացած կենցաղային կեղտաջրերի կազմակերպված ձևով հեռացումը:

ԱՆ-ի սույն փաթեթը ներառում է աշխատանքային 2 գրքեր՝

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ գծագրական մաս և ծավալաթերթ

Գիրք 2 - Նախահաշիվ

Ընդհանուր դրույթներ և գծագրական մաս և ծավալաթերթ - Գիրք 1-ով ներկայացված են ԱՆ-ի համապատասխան աշխատանքային գծագրերը, նախագծի համար հիմք հանդիսացող բոլոր փաստաթղթերը, համապատասխան բաժինների մանրամասն աշխատանքային ծավալների նկարագրությունը իրենց քանակներով, մասնագիտական եզրակացությունները, ԱՆ-ի բացատրագիրը, աշխատանքների կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրությունը, առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկը, ըստ պահանջվող քանակի, առաջարկվող աշխատակազմի ցանկը, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումները և այլն:

Նախահաշիվ - Գիրք 2-ով ներկայացված են աշխատանքային ծավալների մանրամասն նախահաշիվները:

ՄՇԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վերակառուցվող կոյուղատար համակարգը ապահովելու է Հալաբյան 5 և 3 շենքերի վերակառուցվող կոյուղու համակարգից ստացվող կեղտաջրերի կազմակերպված ձևով հեռացումը դեպի քաղաքային կոլեկտորներ, վերացնելով տարածքներում ներկայումս տիրող հակասանիտարական վիճակը:

Նշված հասցեում կոյուղատար համակարգը գտնվում է քայքայված վիճակում, չեն գործում դիտահորերը և խողովակաշարը ամբողջությամբ աշխատում է տղմակալված, որոնք էլ դառնում են հաճախակի վթարների պատճառ, շենքերի բակային հատվածում ստեղծելով հակասանիտարական վիճակ:

Հալաբյան 5 հասցեում գոյություն ունեցող կոլեկտորները անցնում են բնակիչների կողմից տարբեր տարիների ընթացքում կառուցված/ցանկապատված այգիների միջով, դառնալով սպասարկման համար անհասանելի:

Սույն ԱՆ-ով նախատեսվում է փոխել կոլեկտորների ուղեգիծը՝ այն կառուցելով բակային ասֆալտապատ ճանապարհներով, միացնելով Քրրք Քրրքորյան փողոցով անցնող Ø1000մմ տրամագծի կոյուղու կոլեկտորին գոյություն ունեցող դիտահորում, ինչպես նաև ապահովելով հետագա անխոչնդոտ սպասարկումը:

Գոյություն ունեցող համակարգի լուսանկարներ:

Հալաբյան 5 հասցեում աշխատանքային նախագծով նախատեսվել է պայմանական համարակալված Կ₁ և Կ₂ կոյուղու կոլեկտորի իրականացում DN200-500մմ տրամագծի, L=525.0մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակներից, D=1.0մ և D=1.5մ թվով 30 հատ գծային և անկյունային

ե/բ դիտահորերի իրականացում (դիտահորերի մանրամասն մասնագրերը տես գծագրական մաս):

Նոր կառուցվող կոյուղատար համակարգը հիմնականում ընկած է շենքերի բակային՝ ասֆալտապատ հատվածներում, այդ հատվածներում խրամուղիների հետլիցքը իրականացվելու է անբողջությամբ ավագով, վերականգնվող ծածկույթը նախատեսված է իրականացնել գոյություն ունեցողին համապատասխան՝ նույն ֆռակցիաներով, իսկ այն հատվածներում որտեղ խրամուղիները ընկած են գրունտային մասերում, ետլիցքը նույնպես իրականացվելու է ավագով՝ սակայն վերականգնվելու է միայն բուսական շերտը:

Ելնելով գոյություն ունեցող իրավիճակից կառուցվող խողովակաշարի մշակվող խրամուղիներում և փոսորակներում նախատեսված են նաև ձեռքով կատարման աշխատանքներ:

Սույն ԱՆ-ով նախատեսված է ապամոնտաժել գոյություն ունեցող դիտահորերի ծածկի սալերը, բաց փոսորակներում նախատեսվող ավազի հետլիցք և ծածկույթի վերականգնում՝ տվյալ մակերեսներին համապատասխան, որոնք ներառված են աշխատաքնային ծավալների ենթաբաժիններում:

Նշենք նաև, որ սույն ծրագրով նախատեսված է ամբողջությամբ վերականգնել գոյություն ունեցող համակարգին միացված կոյուղու ելքագծերը, որոնց համար կոլեկտորների աշխատանքային ծավալների ենթաբաժիններում նախատեսված են համապատասխան հողային, շինարարական և տեխնոլոգիական աշխատանքների ծավալներ:

Սույն ԱՆ-ով նախագծվող կոլեկտորների վրա դիտահորերի տեղերը ընտրված են հաշվի առնելով գոյություն ունեցող ելքագծերի տեղերը, ինչպես նաև հեռավորությունը մեկը մյուսից նախատեսվել է համաձայն СНИП-ի, սակայն կոյուղու դիտահորերի տեղերը շինարարության ընթացքում կարող են փոփոխվել՝ բացահայտված խնդիրները հաշվի առնելով, սակայն այս դեպքում ևս պետք է պահպանվեն նախագծով տրված դիտահորերի նորմատիվային (առավելագույն) հեռավորությունները մեկը մյուսից:

Նախագծվող կենցաղային կոյուղու և գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի խողովակների ինչպես նաև այլ ստորգետնյա կոմունիկացիաների միջև հնարավոր են փոխհատումներ, շինարարության ընթացքում փոխհատվող հանգույցներում անհրաժեշտության դեպքում պետք է տրվեն համապատասխան լուծումներ:

Նախագծված կոյուղագծերի և գոյություն ունեցող ջրագծերի հնարավոր փոխհատումների դեպքում, (որոնք ի հայտ կգան շին. աշխատանքների ժամանակ) եթե ջրագիծը անցնում է կոյուղագծի տակով, անհրաժեշտ է ջրագծի վրա նախատեսել պատյան խողովակ, իսկ եթե ջրագիծը անցնում է կոյուղագծի վրայով և խողովակների պատերի միջև հեռավորությունը չի գերազանցում 0.4մ-ը, այս

դեպքում ջրագծերի վրա նույնպես նախատեսվում է պատյան խողովակների իրականացում:

Հարկ ենք համարում նշել, որ լրացուցիչ խնդիրներից խուսափելու նպատակով, հողային աշխատանքների իրականացման ընթացքում, Կապալառուն պարտադիր պետք է շինհրապարակ հրավիրի նաև ստորգետնյա կոմունիկացիաները շահագործող կազմակերպությունների ներկայացուցիչներին, տեղում կոմունիկացիաների տեղերը հստակեցնելու նպատակով:

Կոլեկտորների նախագծային թաղման խորությունների համար հաշվի է առնվել պոլիէթիլենե խողովակների վրա մեխանիկական բեռի ազդեցության պայմանը և թույլատրելի թեքությունները:

Ընդհանուր առմամբ, սույն ԱՆ-ով վերակառուցվող կոյուղատար համակարգում նախատեսվել է՝

- Պոլիէթիլենե DN500(GF),SN8 լայնուկավոր ակոսավոր խողովակներով կոյուղագծերի կառուցում՝ 190.0 մ:
- Պոլիէթիլենե DN315(GF),SN8 լայնուկավոր ակոսավոր խողովակներով կոյուղագծի կառուցում՝ 235.0 մ:
- Պոլիէթիլենե DN200(GF),SN8 լայնուկավոր ակոսավոր խողովակներով կոյուղագծի կառուցում՝ 100.0 մ:
- Պոլիէթիլենե DN500/250/200/160/110(GF),SN8 լայնուկավոր ակոսավոր խողովակներով ելքագծերի վերակառուցում՝ ընդհանուր 121.0 մ:
- D=1.5մ տրամագծով թվով 7 հատ ե/բ կլոր օղակներով դիտահորերի կառուցում:
- D=1.0մ տրամագծով թվով 23 հատ ե/բ կլոր օղակներով դիտահորերի կառուցում:

Դիտահորերի փաստացի և բանվորական բարձրությունները տես զճագրական մասում:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Սույն նախագծով նախատեսված է իրականացնել Երևան քաղաքի Հալաբյան 5 հասցեի կոյուղու համակարգի վերակառուցման աշխատանքները:

1.1 Նպատակները և աշխատանքների ամփոփագիրը

Աշխատանքային նախագիծը, մշակված է համաձայն Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքի պահանջների, ինչպես նաև տեղում իրականացված ուսումնասիրությունների և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում կայացրած որոշումների:

Նախագծի հիմնական նպատակն է ապահովել դիտարկվող տարածքների կոյուղատար համակարգի բարելավումը, բնակչության համար ստեղծելով ժամանակին համապատասխան սանիտարահիգիենիկ պայմաններ:

1.2 Շինհրապարակների գտնվելու վայրը

Շինհրապարակը գտնվում է Երևան քաղաքի Հալաբյան 5 հասցեում:

1.3 Ընդհանուր տեղեկություն շինհրապարակների և գոյություն ունեցող կառուցվածքների մասին

Որպես շինհրապարակ է ծառայում վերոնշյալ հասցեի բակային հատվածները, շինհրապարակների երկրաբանական տվյալները ավելի մանրամասն բերված են Գիրք 1-ի երկրաբանական եզրակացությունում:

Հալաբյան 5 հասցեում կոյուղատար համակարգը ներկայումս գտնվում է անբավարար վիճակում, խողովակաշարը բազմաթիվ հատվածներում ունի խցանված տեղամասեր, դիտահորերը մեծամասամբ քայքայված են և քանդված:

1.4 Մուտքը շինհրապարակ և պահեստներ

Մինչև շին. հրապարակ մուտք գործելը, Կապալառուն պետք է Պատվիրատուից ստանա համապատասխան շինարարության (քանդման) թույլտվությունը:

Մինչև շինարարական աշխատանքների իրականացումը, Կապալառուն պետք է համոզվի շինհրապարակ տանող և շինհրապարակի ներսում ճանապարհների մատչելիության մեջ: Կապալառուն պետք է հետազոտի ճանապարհների վիճակը, հաշվի առնելով նրանց կրողունակության և զգալի տային սահմանափակումները և շինհրապարակում աշխատող մեխանիզմների քաշն ու չափերը:

Թրթուրավոր մեխանիզմների տեղափոխումը ասֆալտապատ ճանապարհով անհրաժեշտ է իրականացնել տրայլերներով:

Բաց փոսորակները, խրամուղիները և հորերը պետք է ցանկապատվեն, կահավորվեն նախագգուշացնող նշաններով և լուսավորվեն գիշերային ժամերին:

Շինհրապարակի յուրաքանչյուր առանձին մաս, որտեղ կատարվում են շինարարական աշխատանքներ, պետք է մատչելի լինի բանվորների, մեխանիզմների ու մեքենաների համար:

Շինարարական նյութերը պետք է ընդունվեն և պահեստավորվեն ընդունված կարգով՝ դրանց համար նախատեսված տեղամասերում կամ պահեստներում:

1.5 Ինժեներա-գեոդեզիական հետազննություն

1.5.1 Ընդհանուր դրույթներ

Կապալառուն շինարարական աշխատանքների կատարման ընթացքում պետք է ապահովի նախագծային նիշերը, թեքությունները, անկյունները և նախագծային մյուս պահանջները:

Իրականացնի կառուցվածքների առանցքների ու անկյունների նշահարումը և նրանց ամրացումը:

1.5.2 Տեղանքի տեղակայման տվյալներ

Կառուցվածքների ու կոլեկտորների առանցքային, ինչպես նաև հիմնական կետերի տեղակայումը պետք է ստուգվի և ընդունվի Ինժեների կողմից:

Հենանիշը տրամադրվում է Կապալառուին շինարարությունը սկսելու ծանուցագրի հետ, սակայն Կապալառուն շինարարական աշխատանքները սկսելուց առաջ պետք է ստուգի հենանիշի ճշտությունը գլխավոր հենանիշի նկատմամբ:

1.5.3 Ժամանակավոր հենանիշեր

Կապալառուն շինությունների համար պետք է տեղադրի ժամանակավոր հենանիշեր, որոնց տեղը պետք է համաձայնեցվի Ինժեների հետ:

1.5.4 Կապալառուն պետք է մակարդակաչափումով տեղակապի բոլոր ժամանակավոր հենանիշերը հիմնական հենանիշի հետ:

1.5.5 Շինարարության կազմակերպում

Ըստ շին.կազմակերպման նախագծի շին. աշխատանքների 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները

- Ժամանակավոր շարժական շինությունների տեղադրում ըստ շինության ընթացքի
- շին. տեղամասի ժամանակավոր ցանկապատում ըստ ընթացքի
- Ժամանակավոր ճանապարհային նշանների տեղադրում
- շին. տեղամասի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է խրամուղիների փորման և խողովակաշարերի մոնտաժման շինարարական աշխատանքները:

Հողային աշխատանքների համար ընտրված է փոքր հզորության հակադարձ շերտավոր էքսկավատոր, ավելցուկային բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափերի միջոցով մինչև 8.0 կմ, (մեքենա-մեխանիզմների պահանջվող տեսակները և քանակները տես համապատասխան աղյուսակում) անմիջապես խողովակաշարերի և կառուցվածքների հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքի աշխատանքով՝ ձեռքի պարզագույն գործիքներով:

Հետլիցքի իրականացում

Նախագծվող պոլիէթիլենային խողովակաշարի տեղադրումից առաջ խրամուղու հատակը պետք է ենթարկել մանրակրկիտ հարթեցման, որից հետո նախապատրաստական շերտի ստեղծումը և հետլիցքը իրականացնել հետևյալ հաջորդականությամբ, պահպանելով նախագծային պահանջները՝

- Նախապատրաստական շերտի ստեղծում ավագով 10.0սմ հաստությամբ:
- Խողովակաշարի մոնտաժում:
- Պաշտպանիչ շերտի իրականացում խողովակի վերին շուրթից հաշված 20.0 սմ հաստությամբ – նույնպես նախատեսվում է իրականացնել ձեռքով, ավագով խողովակի շուրջ բոլորը տոփանումով, ինչը կբացառի խողովակի տեղաշարժը:
- Հետլիցքը իրականացվելու է էքսկավատորով, իսկ տոփանումը պետք է իրականացնել ձեռքով՝ ձեռքի տոփանիչ թրթռասալերով, տոփանվող մակերեսի ջրմամբ, 20.0-30.0 սմ հաստությամբ շերտերով՝ խտացման գործակիցը հասցնելով նախագծով տրված չափանիշներին:

Սույն աշխատանքային նախագծով խրամուղիներում և փոսորակներում նախատեսվող բոլոր տիպի հետլիցքի գրունտների հարաբերական խտացման գործակիցները (K_{խտացում}) բերված են ստորև աղյուսակում:

№	Գրունտների դասակարգումը	Գրունտների հարաբերական խտացման գործակիցները (K _{խտացում})
1	Ավազներ 2.0մ-ից բարձր մասնիկների պարունակությամբ մինչև 65%	1.05

Բոլոր տիպի շին. աշխատանքներն անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ СНИП III-IV.2008-ի

դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքերը պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքային ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված: Շին. տեղամասը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. տեղամասի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Ամբողջ շինարարության ընթացքում կատարել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Թույլ չտալ թունավոր արտանետումների նորմայից ավել քանակություններ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. տեղամաս պետքե մտնեն և դուրս գան մաքուր վիճակով:

Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթով, թույլ չտալով փոշու ամպի գոյացումներ:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**Առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկ,
ըստ պահանջվող քանակի
Շինարարության տնտեսությունը՝ 3.0 ամիս:**

Առաջարկվող աշխատակազմի ցանկ

<i>N^o</i>	<i>Անվանումը</i>
1	Շինարարության ղեկավար
2	Շինարարության ճարտարագետ-շինարար
3	Շին. Մոնիտաժային աշխատանքների աշխույժ
4	Էլեկտրիկ
5	Մետաղական կոնստրուկցիաների եռակցող
6	Ատաղձագործ
7	Բետոնագործ
8	Ներկարար
9	Գեոդեզիստ

Առաջարկվող մեքենա-մեխանիզմների ցանկ

<i>N^o</i>	<i>Անվանումը</i>	<i>Քանակ/հատ</i>
1	Էքսկավատոր՝ հակադարձ շերտիով V=0.24մ ³ Որպես օրինակ՝ CAT 428F	2
2	Ավտոամբարձիչ (առնվազն 16մ սլաքի թռիչքով և 6տն. բեռնունակությամբ)	1
3	Ինքնաթափ բեռնատար մեքենա 12-20տն. բեռնատրոդությամբ Որպես օրինակ՝ KAMAZ 5511, SHACMAN X3000, HOWO T5G 6x4	4
4	Էքսկավատորին ամրակցվող/ձեռքի պնևմատիկ հարվածահար մուրճ	1/2
5	Ձեռքի պարզագույն գործիքներ	20
6	Տոփանիչ (թրթռասալ), հզորությունը՝ 4.0-5.5 կՎտ	2
7	Շարժական էլեկտրաեռակցման սարքավորում	2
8	Նիվելիր/Տախեոմետր	2
9	Ներքին այրման շարժիչով շարժական գեներատոր	1

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՅՄՍԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ														
Հ/Հ	Աշխատաքների անվանումը	Ամիսներ												
		1				2				3				
		Շաբաթներ												
		1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4	
1	Մոբիլի իզացիա													
	Անֆալտ սրբետոնե ծածկույթի կտրվան աշխատանքներ													
3	Խրամառողիների և փտրակների փորման աշխատանքներ													
4	Խողովակների մոնտաժման աշխատանքներ													
5	Դիտահորերի կառուցման աշխատանքներ													
6	Կոյուղու կոլեկտորների փորձարկման աշխատանքներ													
7	Խրամառողիների և փտրակների ետլիցքի աշխատանքներ													
8	Տարածքների մաքրման, բարեկարգման խրամառողիների և փտրակների գոյություն ու նեցող ծածկույթի վերականգնման աշխատանքներ													

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Աշխատանքային նախագծով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում: Տարածքներում չկան հողերի օտարման կամ ժամանակավոր օգտագործման խնդիր, քանի որ կոլեկտորները ամբողջությամբ անցնում են ճանապարհներով:

Հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ՝ ուստի նրանք սահմանափակ են և կարճատև: Բացասական ազդեցությունները նվազեցնելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող միավորները (Տես ստորև): Շինարարության ժամանակ կարելի է ակնկալել կարճատև բացասական ազդեցություններ՝

- Օդի աղտոտում
- Աղմուկ
- Երթևեկելի ճանապարհների խաթարում և ծանրաբեռնվածություն
- Շրջակա միջավայրի աղտոտում շինարարական և կենցաղային աղբով
- Հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութով և քսայուղերով
- Ջրային և հողային ռեսուրսների աղտոտում քլորով:

Սոցիալական ազդեցություններից են ճանապարհների խաթարումը և ծանրաբեռնվածության ավելացումը, բնակչության և շինարարներին սպառնացող վտանգները և այլն:

Հողային և ջրային ռեսուրսների աղտոտումը վառելանյութով և քսայուղերով բացառելու համար անհրաժեշտ է վերջիններս պահեստավորել մեկուսացված մակերեսի վրա՝ հողային և ջրային ռեսուրսներից հեռու տարածքներում, օգտագործված քսայուղերի հավաքման համար օգտագործել հատուկ տարաներ, որոնք հետագայում կհեռացվեն հատուկ տեղադրման վայրեր կամ վերամշակման համար հատկացված տեղանքներ:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու նպատակով դրանք տեղափոխել համայնքի համապատասխան աղբավայր՝ նախապես պայմանագիր ունենալով համայնքի ղեկավարության կամ աղբավայրը շահագործողների հետ:

Շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող **փոշու ազդեցությունը** նվազեցնելու համար պարբերաբար ջրել շինարարության տարածքը:

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով՝ սահմանափակել գիշերային աշխատանքը բնակեցված տարածքներում, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից:

Շինարարության ժամանակ **բնակչությանը և շինարարներին սպառնացող վտանգները** կանխելու նպատակով ժամանակավոր տեղադրման սահմանազատող մետաղական ճաղավանդակներով ցանկապատել շինհրապարակը, վերջիններիս վրա տեղադրելով գիշերային լուսավորություն համար նախատեսված առկայծող լուսատուներ:

Մետաղական ճաղավանդակների նվազագույն բարձրությունը պետք է լինի 1.50մ: Այն հատվածներում, որտեղ առկա են բնակչության ինտենսիվ տեղաշարժ, բաց խրամուղիների և փոսորակների վրա տեղադրել ժամանակավոր հետիոտնային մետաղական, բազրիքավոր կամրջակներ:

Վերահսկել չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ, վտանգավոր տեղերում տեղադրել նախազգուշացնող նշաններ, իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ որակավորված աշխատակիցների միջոցով, ինչպես նաև պարբերաբար անվտանգության աուդիտներ, շինարարների համար կազմակերպել առաջին օգնության և անվտանգության դասընթացներ:

Ապահովել աշխատանքային անվտանգության և առողջության կանոնները:

Նախագծի գլխավոր ինժեներ

Է. Հոդաբաշյան

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՑԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԱՔՑԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ
ԿՈՑՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի և
կոնստրուկցիաների նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Ցեմենտ	այո	30
Ավազ	այո	30
Խիճ	այո	30
Պողպատ	այո	30
Բիտում կամ բիտումա- պոլիմերային քսանյութեր	այո	5
Ներկանյութեր	այո	5

«ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ

տնօրեն՝

Է. Հոդաբաշյան

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԱՔՅԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ
ԿՈՑՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն
երաշխիքային ժամկետների ցանկ

Վերակառուցվող կամ նոր կառուցվող հատվածներ	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի	Աղբյուրը և նորմատիվը
Հավաքովի ե/բ օդակներով դիտահորեր	35-40	ըստ գրականության
Պոլիէթիլենե խողովակներ	75-80	ըստ արտադրող ընկերությունների տրված տեխնիկական բնութագրերի

Արտադրանքի վերջնական երաշխիքային ժամկետները պետք է ճշտել արտադրող
կազմակերպության կողմից ներկայացվող տվյալների հիման վրա

«ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ

տնօրեն՝

Է. Հոդաբաշյան

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԱՔՅԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ
ԿՈՑՈՒՂԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Օբյեկտի նախատեսված աշխատանքները իրականացնող կապալառու կազմակերպության
նվազագույն երաշխիքային ժամկետներ

Մրցույթում հաղթող Կապալառու կազմակերպությունը պարտավոր է 1 տարի
երաշխիքային ժամկետում վերացնել իր կողմից կատարված աշխատանքներում
շինարարական գործնթացից առաջացած բոլոր թերությունները:

«ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ

տնօրեն՝

Է. Հոդաբաշյան

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԼԱՔՅԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ
